

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 251-Ա

14 օգոստոսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1822-Ա, N 1836-Ա, 2020 թվականի հուլիսի 15-ի N 1864-Ա, 2020 թվականի հուլիսի 17-ի N 1878-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 10-12-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ՝ գ. Արևադաշտ (գրասենյակ):
2. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) կողմից անձանց ընդունելությունը.
 - 1) «Հակոբ Գրիգորյան Արամի» Ա/Ձ՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի համայնք, Շիրակացի 13/10.
 - 2) «Ալվարդ Մարկոսյան Անուշավանի» Ա/Ձ՝ Դիլիջան համայնք, Թբիլիսյան խճուղի 59.
 - 3) «Կարեն Օքմինյան Սոսի» Ա/Ձ՝ Դիլիջան համայնք, Երևանյան խճուղի.
 - 4) «Սուսան Խոջումյան» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Երիտասարդական 4/9.
 - 5) «Գլաճոր համալիր» ՍՊԸ՝ ք. Սևան, Կենտրոնական հիվանդանոցից հարավ-արևելք.
 - 6) «Խոլոդոկ» ՍՊԸ՝ ք. Սևան, Արևիկ լողափ.
 - 7) «Աննա Գալուստյան» Ա/Ձ՝ ք. Սևան, 2փ 19.
 - 8) «Նախագիծ-հենք» ՍՊԸ՝ ք. Սևան, նախկին հիվանդանոցից հարավ-արևելք.

9) «Մարինա Կիրակոսյան» Ա/Ձ՝ ք. Սևան, 13 փողոց 2.

10) «Արթ Քիլ» ՍՊԸ՝ Ճամբարակ 6-րդ կմ.

11) «Ազատ Ստեփանյան» Ա/Ձ՝ Սևան-Ճամբարակ 6-րդ կմ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 14/08/20 19:14:17 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ